

ԱՂՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԻ ՔԱՆԻ ԲՆԱԳՐԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Ա. Գ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

Ներկա հոդվածում մենք խնդիր չունենք քննության առնել աղվանական գրի և գրականության հարցն ըստ էության, այլ ցանկանում ենք խոսել միայն մի քանի բնագրերի մասին, որոնք թյուրիմացաբար են աղվանական համարվել: Այս հարցի լուսաբանությունը, մեր կարծիքով, կարևոր է, քանի որ Մինգեչաուրում հայտնաբերվել են աղվաններին արձանագրություններ, և այժմ կովկասագետները եռանդուն ջանքեր են գործադրում դրանք վերծանելու ուղղությամբ: Անհրաժեշտ է վերջնականապես պարզել՝ թե մեզ հայտնի աղվանական բնագրերից ո՞րն է հարազատը և ի՞նչ բանալիով կարելի է վերծանել դրերի խորքից մեզ հասած աղվանական: այդ արձանագրությունները, որոնց ո՛չ գիրն է հայտնի և ո՛չ լեզուն: Մեր կողմից քննարկվող աղվանական այդ բնագրերի մի մասը կովկասագիտության մեջ հայտնի է վաղուց, իսկ մյուսները գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:


Աղվանական այբուբենի առաջին գյուտարարի դերում հանդես է եկել ֆրանսիացի արևելագետ Ե. Բորեն: Նա 1838 թվականի հոկտեմբերի 24-ին ֆրանսիական գիտությունների ակադեմիային ներկայացրած իր զեկուցագրի մեջ հաղորդել է, որ իրեն հաջողվել է էջմիածնի մատենադարանի մի ձեռագրի ձեռն և դեղնած պահպանակի վրա՝ հայտնաբերել աղվանական փնտրվող այբուբենը¹:

Բորենի մատնացույց արած այդ ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանում և գրանցված է № 2013 թվահամարի տակ: Զեկուցարի գրչությունն այնքան էլ հին չէ. ընդօրինակված է 1754 թվականին Կարապետ գրչի կողմից: Աղվանական համարվող այդ այբուբենը ընդօրինակված է հայկական, հնդկական, ասորական և լատինական այբուբենների շարքում զարգադիր մի գրչախաղից հետո, որի մեջ ցրված ձևով զետեղված հայերեն գրությունը վերծանվում է. «Այս է գիր արարածոց, զոր գրեաց Մովսէս ի գիրս իւր»: Գրչախաղից հետո բերվում է աղվանական կոչվող այբուբենը, որի վերջում նշված է հայերեն նոտր գրով «աղւնց», որը վերծանվում է «Աղուանից», այսինքն՝ տվյալ այբուբենն աղվանական է:

Բորենի մատնացույց արած աղվանական այբուբենի տառստիչներին նայելով դժվար չէ նկատել, որ այն ո՛չ թե աղվանական գիր է, այլ հայկական նոտր գրի վրա հորինված հայկական ծածկագիր նշանագրություն. հայկական տառանիշներն այստեղ ենթարկված են աննշան փոփոխությունների՝ առանց խախտելու հայկական այբուբենի տառաշարքը:

¹ Eugene Bore, Correspondance et memoires d'un voyageur en Orient, t. II, Paris, 1840, p. 34—53.


Բորեի աղվանական համարած այս այբուբենի մասին ժամանակին խոսել է բանասեր Խորեն Ստեփաննեն պատմահայր Խորենացու Պատմության իր կատարած թարգմանության ծանոթագրության մեջ և իրավացի նկատել, որ «Բորեի դտածը՝ իբր թե աղվաներեն այբուբենը, ամենատգետ հայն կհասկանար, որ մեր հայկական նոտր գիրն է»²:



Նկ. 1 Բորեի աղվանական այբուբենը՝ ձեռագրից:

Բորեի անհաջող ուղիով է ընթացել նաև բանասեր Ն. Քարամյանցը: Նա Մյունխենում մասնավոր անձնավորություններից մեկի հայկական ձեռագրում (ընդօրինակված Հովասափ Սեբաստացու կողմից 1564 թվականին), հայտնաբերել է անսովոր երկու տողից բաղկացած մի գրություն, որի կողքին գրված է. «Գիր Աղվանից»³: Քարամյանցը կարծել է, թե այն իրոք աղվանական է, ուստի 1886 թվականին Գերմանական արևելագիտական ընկերության պարբերականում հանդես է եկել «Քսան և մի տառանիշ կորած այբուբենից» խորագրով սենսիացիոն հոդվածով⁴:

Քարամյանցի հրատարակած աղվանական այս գրությանը հետագայում անդրադարձել է բանասեր Ֆ. Մուրատը և անվիճելի ապացուցել, որ Քարամյանցը թյուրիմացության մեջ է. «Աներկբա է,— դրել է նա,— վերոգրյալ նշանագիրք բնավ չկարեն լինել մնացորդ ինչ կորուսյալ անհայտ գրոցն աղվանից, այլ մանավանդ, որպես ակնհայտնի երևի՝ ստուգիվ խորհրդով այլաձևյալ և հերյուրյալ իսկական հայերեն նշանագիրք»⁵:



Նկ. 2. Քարամյանցի հրատարակած «Աղվանական գիրը»:

² Մ ո Վ ս ե ս Խ ո Ր ե ն ա ց ի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանություն Խորեն Ստեփաննի, ՍՊԲ, 1898, էջ 485:

³ Այժմ այդ ձեռագիրը Բեռլինի պետական մատենադարանի սեփականություն է Ms. Orient. quart 805 ձեռագիր):

⁴ N. Karamianz, Einundzwanzig Buchstaben eines verlorenen Alphabets „Zeitschrift der Deutschen Morgenlandischen Gesellschaft“, 40, 1886, p. 315—319).

⁵ «Հանգես ամսոյա», 1903, էջ 231—233:

Բանասեր Ֆ. Մուրատյան այն վերծանել է.

«Գիր աղանից».

Յ Ի Շ Ե Յ Է Ք Զ Մ Ե Ղ Ա Պ Ա Ր Տ Յ Ո Վ Ա Ս Փ

Ս Ա Ր Կ Ա Ի Ա Ք Ն»:

Այս ծածկագրությունը հայ մատենագրության մեջ հայտնի է «Բժշկական ծածկագիր» անունով. Մինչև վերջին ժամանակներս հայտնի էին նրա միայն 26 նշանագրերի իմաստը, իսկ մնացած 12-ն անհայտ էին մնում: Հանգուցյալ պակագ. Հ. Աճառյանը ժամանակին տեղակացել է, որ այս ծածկագրության ամբողջական բանալին հայտնի է հայ ոսկերիչների նեղ շրջանակներում: Հ. Աճառյանը փորձել է ոսկերիչներից ստանալ ծածկագրի բանալին, սակայն նրանք հրաժարվել են տալ, որովհետև «անոնք».— ինչպես գրում է Աճառյանը.— իրենց վարպետներուն երգում տված են եղեր. ուստի ծածկագրին գաղտնիքը երևան չեն հաներ»⁶:

Հայկական ձեռագրերի ուսումնասիրության ընթացքում մեզ հայտնի դարձան բժշկական ծածկագրությամբ գաղտնադրված մի շարք ձեռագրեր, որոնց միջոցով դժվար չէր նախագասության իմաստը մակաբերելով, լրացնել պակաս նշանագրերը և ամբողջացնել այն: Բժշկական այդ ծածկագրերով գաղտնադրված հիշատակարաններ մեզ հայտնի դարձան Մաշտոցի անվան մատենադարան (ՄԱՄ) № 6644 ձեռագրում (թ. 163ա—165բ 1527 թ.՝ եղիշ գրչի)⁷, ՄԱՄ-ի № 6731 ձեռագրում (թ. 68ա 1652 թ.՝ Հովասափ Վանեցի գրչի)⁸, ՄԱՄ-ի № 848 ձեռագրում (Հովասափ Սեբաստացու՝ 16-րդ դարի)⁹, Անկյուրիայի № 92 ձեռագրում¹⁰, Անկյուրիայի № 135 ձեռագրում (ճգիա դարի)¹¹ և Անթիլիասի կաթողիկոսարանի № 16 ձեռագրում Հովասափ Սեբաստացու¹² (թ. 61ա):

Պատմական գիտությունների թեկնածու Հ. Անասյանը, իր «Հայկական մատենագիտության» առաջին հատորում, «Աղուանք» անվան տակ, մատենացույց անելով աղվանական կոչվող այբուբեններից միայն մեկը, այն կարծիքն է հայտնել, որ Բորեի և Քարամյանցի հրատարակած այբուբենները կտրող էին հետագա ժամանակներում բարեփոխված, վերամշակված աղվանական տառանիշներ լինել. «...եթե ընդունենք, որ Պեռական Մատենագրանի № 7117 ձեռագրի այբուբենը աղվանական լեզվի հնագույն՝ լիակատար այբուբենն է ներկայացնում,— գրել է նա,— հիմք չկա նաև շրջոններում, որ Բորեի և Քարամյանցի մատենանշածը լինի հետագա ժամանակներում բարեփոխված, վերամշակված, խմբագրված ու հայերեն լեզվի պահանջների համաձայն լրացված աղվանական մի այբուբեն, որ հայացած աղվանները կա-

6 Հ. Աճառյան, Հայոց գրերը, Վենետիկ, 1928, էջ 472:

7 Ա. Գ. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, էջ 222—223:

8 Նույն տեղում, էջ 223:

9 Ա. Գ. Աբրահամյան, Մի քանի ծածկագրերի վերծանությունը (ՊՐՀ 1965, № 4, էջ 231—232):

10 Բարդեն կաթողիկոս Կյուլեսերյան, Յուդակ ձեռագրաց Անկյուրիո Կարմիր վանուց և շրջակայից, 1957, էջ 467:

11 Նույն տեղում, էջ 676:

12 Ա. Գ. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, էջ 224:

րող էին օդատարորժեղ հայերեն գրելիս, ինչպես իրենց մայրենի լեզուն կորցրած հայերը Դալիցիայում գրում էին հայատառ ղփշաղերեն և կամ Օսմանյան կայսրության մեջ՝ հայատառ թուրքերեն»¹³։ Հստ որում, նա աղվանական տառանիշների և ծածկագիր նշանագրերի միջև եղած տարբերությունները համարել է սիայն գծագրական. «Գծագրական տեսակետից՝ երկու այբուբենների միջև գոյություն ունեցող տարբերությունները, — դրել է նա, — կարող են լինել ինչպես ժամանակի ընթացքում առաջ եկած հնարավոր տարբերություններ, այնպես էլ մի կողմից մեծատառի, իսկ մյուս կողմից փոքրատառի (նաև ձեռագրի) տարբերություններ»¹⁴։

Հեղինակը, դժբախտաբար, իր այդ կարծիքը հիմնավորելու համար չի դիմել համեմատության, մատնացույց չի արել որևէ փաստ, որը գար հաստատելու իր տեսակետը։ Ինչ վերաբերում է «հայացած աղվանների» հարցին, որը վերջերս, բոլորովին անհիմն, առաջ քաշվեցին և ուրիշների կողմից, բացահայտ թյուրիմացություն է¹⁵։

Հ. Անասյանի կարծիքը բաժանում է նաև դոկտոր Ա. Մնացականյանը. «Հ. Անասյանի կողմից առաջ քաշվեց այն կարծիքը, — գրել է նա, — թե «Աղուանից դիր» կոչված տառերի մեջ պիտի տեսնել բուն աղվանական այբուբենի փոփոխված տառատեսակները։ Այդ կարծիքն իրավամբ հավանության արժանացավ պրոֆ. Ա. Շանիձեի կողմից»¹⁶։ Նախ, ինչպես ասացինք, Անասյանի կարծիքը ենթադրություն է առանց որևէ առարկայական հիմքի։ Այսպիսով՝ անտեղի է Մնացականյանը դիմել Շանիձեին, որովհետև վերջինս, հենց Մնացականյանի մատնացույց արած հողվածում, ո՛չ թե ընդունել է հայկական ծածկագիր աղվանականի և իրական աղվանականի միջև գոյություն ունեցող կապը, այլ հարցականի տակ է դրել այն. «Հարցական է, — գրել է նա, — թե ծածկագիր այն նշանագրերը, որոնք հայտնի են հայկական ձեռագրերում իբրև աղվանական, ծագե՞լ են արդյոք 1945—1950 թթ. Մինգեչաուրի պեղումների ժամանակ հայտնաբերված արձանագրությունների իրական աղվանական նշանադրերից, թե ոչ»¹⁷։

Համենայն դեպս, մեր կատարած հնագրական ուսումնասիրությունները ոչ մի հիմք չտվեցին այդ երկու բնագրերի մեջ որևէ կապ տեսնելու համար. մենք չկարողացանք գտնել աղվանական որևէ տառանիշ, որը ձևով և հնչունական արժեքով համապատասխան իր երկվորյակը կարողանար գտնել ծածկագիր նշանագրերի մեջ։

Ակադ. Ա. Շանիձեն 1938 թվականին «Կովկասյան ալբանների հայտնագործության շուրջը» խորագրով հուղվածում հրատարակեց Մաշտոցի անվան մատենադարանի № 3124 ձեռագրի պարունակած աղվանական մի այբուբեն, որը վերնագրված է. «Այս է Աղուանից այբուբենը»։ Այս ձեռագիրը շատ հին չէ. ընդօրինակված է 1767 թվականին Մեսրոպ անունով գրչի կողմից։ Ակադ. Ա. Շանիձեն, ուսումնասիրելով այդ բնագիրը, իրավամբ նկատել է, որ նշված

¹³ Հ. Ա. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա., էջ 616։

¹⁴ Հ. Ա. Անասյան, նույն աշխատությունը, էջ 616։

¹⁵ Տե՛ս «Պատմա-Բանասիրական Հանգես», 1946, № 1, էջ 177—190։

¹⁶ Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցի շուրջը, Երևան, 1968, էջ 8։

¹⁷ А. Г. Шанидзе, Криптографическая запись в одной армянской рукописи из Мюнхенской коллекции (Հայկ. ԳԱ-ի «Տեղեկագիր», 1960, № 9, էջ 97—98)։

այբուբենի տառանիշների մեծ մասը հայկական տառերի ձևափոխություններ են, և եկել է այն հետևության, որ «Զի կարելի նշված այբուբենը համարել աղվանական, որովհետև այն պարունակում է փոքր-ինչ ձևափոխված հայկական տառեր՝ ստեղծված ծածկագիր կարիքների համար»¹⁸։ Պետք է ասել, որ այս այբուբենը, որպես հայկական ծածկագրության բանալի, շատ էլ հին

Հայկ. աղվանից այբուբենը:

Ն: Բ: Գ: Զ: Է: Ը: Թ: Ժ: Ի: Կ: Լ: Խ: Ծ: Կ:
 Շ: Ծ: Դ: Ը: Թ: Ժ: Ի: Կ: Լ: Խ: Ծ: Կ:
 Օ: Զ: Է: Ը: Թ: Ժ: Ի: Կ: Լ: Խ: Ծ: Կ:

Նկ. 3. Շանիճեի հրատարակած այբուբենը՝

№ 3124 ձեռագրից:

չէ, որովհետև այնտեղ մեղ հանդիպում են հայկական «և», «օ» և «ֆ» տառերը, որոնք ստեղծվել են 13-րդ դարից հետո:

Հանգուցյալ ակադ. Հ. Աճառյանը իր «Հայոց գրերը» աշխատության մեջ խոսելով աղվանական կոչվող այս ծածկագրության մասին, հետևյալ կարծիքն է հայտնել. «Աղավանագիր բառը (աղավնիի գիր), որ ըստ իս բուն «ծածկագիր» նշանակությունն ունի, ձիշտ այնպես, ինչպես ունենք ծածկագիր լեզվի համար ձնճղկի լեզու, ազոավի լեզու կամ կոկերեն: Այս աղավանագիր բառը հետո շփոթվելով, դիտմամբ կամ պատահմամբ, դարձել է աղվանից գիր, և այս անունով ալ հիշված են ծածկագրերը մեր ձեռագրերու մեջ տեղ-տեղ»¹⁹:

Շանիճեի հրատարակած այս նույն խմբի աղվանական մի այբուբենն ընդօրինակված է Մաշտոցի անվան մատենադարանի № 771 ձեռագրում (թ. 202թ), որն ունի 17-րդ դարի գրչություն: Այբուբենը վերնագրված է. «Գիր Աղուանից րստ այբուբենից», այսինքն՝ սրանք աղվանական այբուբենի տառանիշներ են: Այբուբենի առաջին շարքը կրկնվում է. («դ» տառի բաց թողնելու հետևանքով, ինչպես երևում է, շարքը չի շարունակվել և վերցվել է փակագծերի մեջ): Այս այբուբենի ուշագիր ուսումնասիրությունը բերել է մեղ հաստատուն այն համոզման, որ այս ևս աղվանական լինել չի կարող. ստեղծվել է այն հայկական տառանիշների հաջորդականության և ձևափոխությունների հիման վրա ուշ դարերում և օգտագործվել իրրև հայկական ծածկագրության բանալի:


¹⁸ А. Г. Шанидзе, К открытию алфавита кавказских албанцев, отделный оттиск, стр. 47.

¹⁹ Հ. Աճառյան, Հայոց գրերը. էջ 478:

ները երկու շարքից են, բացառությամբ երրորդը, որն ընդհատվում է չլստառով: Նախորդ այբուբենի օրինակով բերվում է այբուբենի տառանիշները, հետո՝ նրանց վերծանությունը հայկական տառերով: Զորրորդ այբուբենը շարադրված է հակառակ շարքով. նախ բերվում է հայկական այբուբենի տառանիշները, ապա՝ նրանց ծածկագիր նշանագրերը: Այս վեց այբուբեններից ոչ մեկը աղվանական լինել չի կարող. դժվարանում ենք նրանց և աղվանական արձանագրությունների նշանագրերի միջև նմանություններ գտնել: Այս վեց այբուբենները թանկարժեք բանալիներ են հայ ծածկագրության համար, ուստի անհրաժեշտ ենք համարում հրատարակել այն:

Աղվանական այս նույն խմբի մի այբուբեն, առանց վերնագրի, պարունակում է Մաշտոցի անվան մատենադարանի N 3185 ձեռագիրը (թ. 1ա): Ձեռագիրը՝ 18-րդ դարի գրչություն ունի: Այս այբուբենում երևի շարք բերվում են նշանագրերը և, ի տարբերություն նախորդ այբուբենների, տրվում նրանց յուրաքանչյուրի վերծանությունը հայկական տառանիշներով: Աղվանական այս այբուբենը ուշագրավ է նրանով, որ նրա կազմող հեղինակը, ըստ երևույթին, ցանկանալով ցույց տալ ծածկագրելու սկզբունքը, այբուբենի ներքևում բերում է մի նախադասության ծածկագրությունը, որը վերծանվում է. «Շաւրն այսպէս ձգես իմ եղբայր հաւազատ», այսինքն՝ այս սկզբունքով պետք է առաջնորդվես գաղտնագրելիս «հարազատ եղբայր»:

Վերջապես, այս նույն աղվանական խմբին պատկանող երկու այբուբեն պարունակում է Մաշտոցի անվան մատենադարանի N 7017 ձեռագիրը (թ. 1ա), որը ընդօրինակված է 18-րդ դարում: Այս այբուբեններն էլ չունեն վերնագրեր: Այբուբեններից ամեն մեկը շարադրված է երեք շարք: Ամենից ներքև բերված է «տ», «բ» և «ք» տառերի նշանագրերը և նրանց վերծանությունը: Իրար հաջորդող այս երկու այբուբենները շնայած կազմված են նույն սկզբունքով, սակայն առանձին նշանագրեր զգալի չափով տարբերվում են իրարից: Այս այբուբենների և աղվանական արձանագրությունների մեջ նման տառեր փնտրելու ջանքերն անօգուտ են: Սրանք ևս սովորական հայկական ծածկագրության բանալիներ են, որոնք կարող են օգտագործվել վերծանությունների ժամանակ:



Նկ. 6. Աղվանական այբուբենը:

N 3185 ձեռագրից:

Վերջերս Մաշտոցի ծննդյան 1600-ամյա հոբելյանի կապակցությամբ ուշագրավ մի հոդվածով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ պրոֆ. Գ. Սեակը՝ «Մեսրոպյան գրերը, նրանց կառուցվածքի սկզբունքները» խորագրով: Այդ արժեքավոր հոդվածի վերջում նա բերել է Ժիրայր Հիսուսյան քահանայի տարիներ առաջ հրատարակած «Նախարարշտկունյան», «Նախավրացական» և «Նախամեսրոպյան» ալբուրենները՝ նույնտակ ունենալով գիտակցություն շահագրգռված մասնագետների ուշադրությունը հրավիրել նրանց վրա: Պրոֆ. Սեակը գտնում է, որ այդ այբուբենները հին են և «Մեծ չափով կարող են նպաստել մեսրոպյան գրերի հետ կապված կնճռոտ հարցերի լուսաբանմանը»²⁰: Համեմատության մեջ գնելով այդ երեք այբուբենների տառանիշները հին վրացական և աղվանական տառանիշների հետ, նա գալիս է այն հետևության, որ «Այս տառերը մեծ մասամբ նման են մեսրոպյան, հին վրացական և մանավանդ նորահայտ աղվանական գրի շատ տառերին և հանդիսանում են անպայման ավելի հին ձևեր»: Վերջում նա եզրակացնում է, որ «...հավելվածական տառերը հարմար են դալիս իբրև վրացական և աղվանական այն տառերի նախատիպար, որոնց համարժեքը չկան հայերենում»²¹:

Մեր կատարած հնագրական ուսումնասիրություններից պարզվեց սակայն, որ «Նախամեսրոպյան» կոչվող այս այբուբենը ոչ մի կապ չունի իրական նախամեսրոպյան գրերի հետ և կեղծ աղվանական այբուբենի տարբերակներից է՝ կազմված ուշ դարերում հայկական բոլոր և նոտր տառանիշների հիման վրա: Ցանկանալով ցույց տալ Ժիրայր քահանայի հրատարակած այդ տառախմբի մեջ նախամեսրոպյան, նախավրացական և աղվանական գրերի նախամայրերի փնտրելու ապարդյուն ջանքերը, ստորև առաջին սյունակում բերում ենք պրոֆ. Սեակի վերահրատարակած «Նախամեսրոպյան» տառաշարքը, նրան զուգահեռ երկրորդ սյունակում՝ Մաշտոցի անվան մատենադարանի կեղծ աղվանական այբուբենի տառաշարքը՝ վերցնելով № 771 ձեռագրից, որոնք մայր են հանդիսացել Ժիրայր քահանայի տառերին:

Համեմատությունը մեզ բերում է հետևյալ եզրակացության: Ամենից առաջ, Ժիրայր Հիսուսյան քահանայի այսպես կոչված «Նախամեսրոպյան» գրերը հորինված են կեղծ աղվանական տառանիշների հիման վրա, որոնց մայրերը շատ են նմանվում Մաշտոցի անվան մատենադարանի № 771 ձեռագրի պարունակած «Գիր աղուանից ըստ այբուբենից» ընդօրինակությանը²²: Երկրորդ՝ «Նախամեսրոպյան» այդ գրերը երբեք չեն կարող 13-րդ դարից ավելի հին լինել, որովհետև նրանց մեջ օգտագործված են միացյալ «և», կլոր «օ» և «ֆ» տառերը: Երրորդ՝ «Նախամեսրոպյան» այդ գրերը հորինված են հայկական բոլորգրի հիման վրա՝ տառանիշների պոչերը ոլորելու և աննշան փոփոխության ենթարկելու ճանապարհով: Չորրորդ՝ «Նախամեսրոպյան» տառանիշների նախամայրերը ո՛չ թե հայկական հնագույն մաշտոցյան գրեր են, այլ ուշ շրջանի հայկական բոլոր գրերը: Հայկական հնագրությամբ զբաղվող մասնագետներին հայտնի է, որ «ձ» տառը գրվում էր, ոչ թե ներկայիս փոքրատառ ձևով, այլ «Ձ» ձևով, «շ» տառը հնում գրվում էր

20 Գ. Ս ե ա կ, Մեսրոպյան գրերը, նրանց կառուցվածքի սկզբունքները և աղբյուրները (ՏԵՄ՝ առանձնատիպ «Մեսրոպ Մաշտոց» ժողովածուից, էջ 206):

21 Գ. Ս ե ա կ, նշված աշխատությունը, էջ 207:

22 ՄԱՄ, № 771, ք. 202ր:

Ն	Ն	Շ	Շ	am
Ր	Ր	Շ	Շ	ce ▷
Գ	4	5	5	∞ ℓ
Դ	3	Ճ	Շ	Շ
4	Δ	Շ	Հ	▷ ∞
Շ	Շ	Շ	Χ	Υ Գ
3	h	Շ	Շ	Կ Կ
5	□	ժ	Յ	Հ o
Ր	Դ	Ճ	6	Յ ϕ
ժ	ժ	Շ	2	✱ Ճ
Ր	Շ	Δ	□	Ե Ե
Կ	Δ	Ճ	Հ	o
Խ	Խ	Շ	Կ	Շ Շ

Նկ. 7. Նախամաշտոցյան այբուբենի և աղվանական ծածկագրերի համեմատական սյունակը:

ոչ թև ներկայիս շշաձև, այլ «Շ» ձևով, «յ» տառը գրվում էր ոչ թև ներկայիս փոքրատառով, այլ «Յ» ձևով և այլն: Եվ այսպես, Ժիրայր քահանայի հրատարակած այբուբենի մեջ անտեղի է «նախամասրողյան», «նախավրացական» կամ «նախաարշակունյան» դրեր փնտրելու ջանքերը:

Ժիրայր քահանայի այբուբենների սակայն, ինչպես երևում է, հորինած կեղծիք չէ, այլ վերցված է հայկական ձևագրերից, ճիշտ է՝ ոչ այնքան հին ձևագրից: Ժիրայր քահանայի նախամասրողյան կոչվող այբուբենի

Աղվաններին է համարվել Կիրովաբադ քաղաքում (նախկին Գանձակ) գրտնըված երկու խեցիների բեկորների վրա եղած գրությունները։ Այդ խեցեբեկորներից մեկը գտել է Կիրովաբադի քաղաքային թանգարանի դիրեկտոր Ե. Բ. Խալզարինը քաղաքի հին տեղամասում 1935 թվականին։ Երկրորդ խեցեբեկորը գտել է հնագետ, պատմական գիտությունների թեկնածու Ի. Մ. Զաֆարզադեն 1940 թվականին Կիրովաբադի հին թաղամասում կատարած պեղումների ժամանակ։

Խեցիները՝ կարմիր հաստ դույնի կավի ինչ-որ ամանների բեկորներ են։ Առաջինի չափ 7×6 սանտիմետր է, իսկ երկրորդինը՝ 4×5 սանտիմետր։ Խեցեբեկորները դրսից ունեն ռելեֆ (բարձրաքանդակ) գրություններ։



Նկ. 9. Կիրովաբադի առաջին խեցեբեկորը

Խեցիներից մեկի մասին առաջին անգամ խոսել է ակտդ. Շանիձեն աղվանական նորահայտ ալբուրենի առթիվ գրած իր ուսումնասիրության մեջ, նա խեցեբեկորի գրությունը համեմատության մեջ գնելով N 7117 ձևադրի աղվանական ալբուրենի տառանիշների հետ, հանդիմ է հետևյալ հարակցության. «Հին Գանձակի խեցու արձանագրությունը, ամենայն հավանականությամբ, աղվանական անհետացած գրության բեկորների առաջին ծիծեռնակն է, բեկորներ, որոնք այնպես են ոչնչացել, որ նրանց գոյությունն ապացուցելու համար հարկադրված ենք լինում լուրջ փաստարկներ բերել»²³։

Հետադաշում, Կիրովաբադի պեղումների արդյունքներին նվիրված իր ուսումնասիրության մեջ, երկու խեցեբեկորների վրա կանգ է առել և նրանց լուսանկարները հրատարակել հնագետ Ի. Մ. Զաֆարզադեն։ Նա ևս հավանական է համարել, որ խեցեբեկորների վրա եղած գրերն աղվաններին լինեն. «Խեցեբեկորների տառերը, — գրել է նա, — հիշեցնում են մեզ հայկական և վրացական, գուցե և աղվանական գրերը»²⁴։

Այս խեցեբեկորների վերծանությամբ զբաղվել է նաև հայտնի լեզվաբան ակադ. Ի. Ի. Մելչանինովը։ Նա պարզել է, որ այս երկու բեկորների գրություն-

²³ А. Шанидзе, Новоткрытые алфавит кавказских албанцев, էջ 60։

²⁴ И. М. Джафадзе, Историко-археологический очерк старой Гянджи, Баку, 1949, стр. 32.

Ֆերը նույն են. «Ինչպես առաջին, այնպես և երկրորդ բեկորների վրա,— գրում է Ի. Ի. Մեշչանինովը,— Երևում են միևնույն բառերը կամ միևնույն նախադասությունները»²⁵:

Կանձակի խեցեբեկորների վերծանությամբ զբաղվել ենք նաև մենք և մեր ուսումնասիրության արդյունքը հրատարակել 1956 թվականին «Երևանի համալսարան» թերթում: Հետագայում նրան անգրադարձել ենք «Կովկասյան աղվանների արձանագրությունների վերծանությունը» գրքույկում²⁶:



Նկ. 10. Երկրորդ բեկորի լուսանկարը:


Մինչև վերջերս մենք անձամբ չէինք տեսել այդ խեցեբեկորները և մեր վերծանությունը հիմնված էր Ի. Մ. Ջաֆարզադեի հրատարակած բավականին խավար ուսուղչավորված նկարների վրա Մենք մի քանի անգամ ևղև ենք Կիրովարադում, փորձել ենք որոնել այդ խեցեբեկորները քաղաքային թանգարանի հարյուրավոր նման էքսպոնատների մեջ, բայց հաջողություն չէինք ունեցել: Վերջերս Բաքվում եղած ժամանակ, Ադրբեջանի պատմության թանգարանի ցուցանյութերը նայելիս, գտանք այդ խեցեբեկորները ցուցասրահներից մեկում: Եվ այսպես, մենք հնարավորություն ստացանք նորից ստուգելու մեր նախկին վերծանությունը:

Կիրովաբադի խեցեբեկորների գրությունների ուսումնասիրությունից պարզվեց, որ նշված գրությունները ոչ թե աղվաներեն են, այլ շրջագիր հայերեն: Կավագործ վարպետը, ինչպես երևում է, նախապես պատրաստած այնպիսի մի կաղապարով, որի վրա ուղիղ գրված է եղել հայերեն բնագիրը, դրոշմել է կավի թաց ամանի վրա և հետո թրծել: Կնքված հայերեն ուղիղ տառերը դուրս են եկել շուռ տված, ուստի դրանք կաբդալու համար, անհրաժեշտ է շուռ տալ կամ կարդալ հայելու միջոցով:

Առաջին խեցեբեկորի գրությունը շուռ տված ձևով կարդացվում է.

²⁵ Նույն տեղում, էջ 32.

²⁶ См. А. Г. Абрамян, Дешифровка надписей кавказских албан, Ереван, 1964, էջ 13.




Նկ. 11. Առաջին բեկորի գծանկարը շուտ տված երեսով:

...դ ա յ ա ռ ա Ա ս ի ռ ա յ...
 ...վ ա յ ի ո Ր զ ի է Ր եւ Ս ե վ ա...
 ...վ ո Ղ ո Ր մ օ ա յ ա ն ձ մ ..Մ հ..

Առաջին տողի «դալարա» և երկրորդ տողի «վալի» բառերը հավանական է հատուկ անվան մասեր են: Երկրորդ տողի «եւ» դրված է կապորով՝ «և» ձևով, որը սովորական է միջնադարյան հայ վիմագրության մեջ: Երրորդ տողի «ողորմեայ» բառը վերծանվում է մեծ ձգվածությամբ, որովհետև տառերի զծիկները տեղ-տեղ հարթված են: Անհավանական չէ, որ երրորդ տողի առջևում անջատված «վ» տառը «վողորմեայ» բառի սկզբնատառը լինի, այդ դեպքում այդ բառում թույլ է տրված երկու ուղղադրական սխալ, բանի որ բառի վերջին «յ»-ն նույնպես տեղին չէ:

Մյուս խեցեբեկորի գրությունը շուտ տված վերծանվում է.



Նկ. 12. Երկրորդ բեկորի գծանկարը շուտ տված երեսով:

... Ա ս ի ր ա յ դ ե ...
 ... է ր եւ Ս ե վ ա գ ...
 ... ն .. Մ հ .

Տառերի դժադրական ձևերին նայելով դժվար չէ նկատել, որ սա երկրորդ խնդրակետի առաջինի երկրորդ մասն է՝ աջից մի քանի տառ շարգված վիճակում:

Երկու խնդրակետերի վերջին «Մ հ»-ն առջևից ունեն երկու, իսկ վերջից՝ մեկ կետ, որով անշատովում են նախորդող բնագրից: Այդ երկու տառերն առանձին վերցրած իմաստ չունեն: Միջնադարյան հայ գրություն մեջ սովորաբար կետերի մեջ են վերցվում թվանշանները²⁷, ուստի կարծում ենք, որ այն պետք է թվական լինի: Եթե մենք չենք սխալվում մեր ենթադրության մեջ, ապա «Մ հ»-ն պետք է համարել հայկական փոքր կամ Սարկավագդիր կոչվող թվական, որին պետք է ավելացնել 1084: Այդ հաշվումով Կիրովաբադի խնդրակետերի գրությունը կլինի 1324 թվականը ($240 + 1084 = 1324$), որը համահասկան է, որ ճիշտ լինի, քանի որ տառանիշների դրածը մոտավորապես այդ նույն ժամանակվա հնություն ունի:

Դժուրատար, խեցեբեկորների գրությունները, ինչպես կարելի է տեսնել, թերի են ինչպես սկզբից, այնպես էլ վերջից և հնարավոր չէ վերծանել ու վերականգնել նրանց իմաստն ամբողջությամբ: Սակայն արձանագրություններն իրար լրացնելով, հնարավոր է լինում մոտավոր ճշտությամբ առաջարկել հետևյալ վերծանությունը.

... դ ա յ ա ր ա Ա ս ի ր ա յ դ ե ...
 ... Ս ա վ ա գ ա յ ի ո ր դ ի ն, ո ր եւ Ս ե վ ա գ ...
 ... վ ո ղ ո ր մ ե ա յ ա ն ձ ն .. Մ հ .

Այսպիսով, պարզվում է, որ Կիրովաբադի խեցեբեկորների գրությունը ոչ թե աղվաններն է, ինչպես կարծել են ոմանք, այլ անվիճելի՝ հայերեն:

Դժվար է ասել, թե ո՞վ է լղել Սեադան. բրուտագործ վարպետը, արհեստանոցի տե՞րը, թե պատվիրատուն, բայց անվիճելի է, որ Սեադա անուններով անձնավորություններ մեզ հանդիպում են հայ մատենագրության մեջ²⁸: Անհավանական չէ, որ «Ղայարա» անունը ևս լինի հատուկ անուն²⁹ ձևավորված «Ղայիր» անվան՝ սեռականով:

Ուշագրավ հարց է, թե ի՞նչ նպատակով է գրի առնվել խեցու ամանի վրա տվյալ դրությունը. արդյոք դա Գանձակում գործող հայ արհեստանոցի դրո՞շմն է, թե այլ նպատակով է գրի առնվել: Մեզ թվում է, որ ամանները պատրաստվել են, ինչ-որ սրբավայրում դնելու, մահացած մարդու համար աստծուց ողորմություն խնդրելու նպատակով, մի սովորություն, որ գոյություն է ունեցել Անդրկովկասում:

Ջարդված կավե ամանի մի այլ խեցեբեկոր, վեց տառ գրությամբ, գտնվում է Բաքվի նիզամու անվան թանգարանում: Այդ խեցեբեկորը դրված է

27 Ա. Գ. Աբրահամյան, Հայ գրի և գրության պատմություն, էջ 130—131:

28 Ղ. Ալիշան, Սխական, Վենետիկ, 1893, էջ 16, 217, 245:

29 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձանանիշների բառարան, հ. գ. էջ 131:

ցուցափեղկում, և նրա գրությունը ներկայացվում է իբրև աղվանական: Մեր ջանքերը՝ թանգարանի գիտնականների միջոցով պարզելու՝ թե ի՞նչ ճանապարհով է ընկել այդ բեկորը Նիզամու անվան թանգարանը, արդյունք չտվեց: Խեցու վրա նկարված է առասպելական մի գազան, հավանական է՝ վիշապ, որը երախը բաց արած հետևում է մի այլ կենդանու: Հավանական է՝ ձիու, որովհետև կենդանու մեջքին երևում է թամբ: Այս երկու կենդանու վերևում բարձրաբանդակ գրված է վեցտառանիշից բաղկացած մի գրություն:

Այս խեցեբեկորի գրությանը մենք անդրադարձել ենք մեր երկու աշխատությունների մեջ՝ «Երևանի համալսարան»-ի արդեն հիշված հոդվածում³⁰ և «Աղվանական արձանագրությունների վերծանությունը» գրքույկում³¹: Նշված աշխատությունների մեջ մենք ցույց ենք տվել, որ այդ գրությունն աղվաներեն չի, այլ հայերեն. բոլոր տառանիշներն, առանց բացառության, հայկական են:



Նկ. 13. Նիզամու անվան թանգարանի աղվաներեն համարվող խեցեբեկոր:

Դժվար է վերծանել և իմաստավորել այս գրությունը, որովհետև նրա փոքրիկ մասն է մնացել, բացի այդ, գրված է, ավելի ճիշտ՝ ուրիշի գրածից նկարված է անգրագետ մեկի կողմից: Մեծ ձգվածությամբ այս գրությունը մենք վերծանում ենք հետևյալ կերպ:

Առաջին բառը, կարծում ենք, «Մ ա ո ա ս» բառն է, որի միջից բաց է թողել ձայնավորները և ընդօրինակման ժամանակ «ո»-ն շփոթել է «ղ»-ի հետ: Մոռացել է հապավված տառերի համար պատվի նշան դնել բառի վրա:

Երկրորդ բառը մենք վերծանում ենք. «Ա ս տ ու ա ծ ա ա ո ո ռ»: Կարծում ենք, որ բառի առաջին մասը պատվադրված ԱՄ տերունական բառն է, որը սովորաբար միջին դարերում գրվում էր հապավված ձևով, այն տարրերով, որ այստեղ զրվել է բառի միջին նաև «ս»-ն: Շարունակությունն «ու»

³⁰ «Երևանի համալսարան», 1956 թ. մարտի 3:

³¹ А. Г. Абрамян, Дешифровка надписей кавказских албан, стр. 15.

շաղկապն է, որը, կարծում ենք բարդված պիտի լիներ երկրորդ՝ «տուր» բառը, որով ստացվում է «Աստուածատուր»:

Ո՞վ է եղել այս Աստվածատուրը, ի՞նչ նպատակով է նկարված թամբած ձին վիշապի առջև, ի՞նչ կապ ունի վերևի դրությունը նկարի հետ, դժվարանում ենք այստասխան տալ: Մի բան սակայն անվիճելի է, որ տվյալ դրությունը հայկական է:

1965 թվականին Բաքվում հրավիրված ՍՍՀՄ հնագիտության և վիճագրության հարցերին նվիրված գիտական սենսիայում Դաղստանի գիտական աշխատող Մ. Մ. Մամաևի կարդացած զեկուցման կապակցությամբ ցուցադրված լուսանկարների մեջ բերված էին մի քանիսը, որոնք դարձյալ ներկայացվում էին իբրև աղվանական դրեր: «Այդ բոլորը (այսինքն՝ ցուցադրված նյութերի լուսանկարներում երևացող գրերը — Ա. Ա.), — գրել է Մամաևն իր թևերում, — նման են Մինգեչաուրի կամ վեմ քարի վրա եղած աղվանական դրերին, ինչպես և՛ արամեական-պարթևական գրություններին»³²:



Նկ. 14. Դաղստանի քարի գրության առաջին երեսը:

Այդ ցուցանյութերից մեզ համար որոշ հետաքրքրություն է ներկայացնում Դաղստանի լաքի շրջանի Տանոս գյուղի մոտ գտնված քարը, որի երկու երեսի վրա կան մի քանի գրանշաններ:

Մեր ուսումնասիրություններից պարզվեց, որ Դաղստանի քարի երկու երեսի վրա գրված գրերը գրված են հայերեն բոլորգիր գրությամբ: Առջևի երեսի վրայի գրությունը մենք վերծանում ենք «Ի Լ Մ Կ Մ Ղ Ճ Բ» (Չախից պարզ երևում է «ի» տառը, նրան հաջորդում է դարձյալ պարզ «լ» տառը, ապա գալիս են «մ» և «կ» տառերը կապգրված ձևով, շարունակության մեջ

³² Տե՛ս «Тезисы докладов на научной сессии по сравнительно-историческому изучению пберииско-кавказских языков северного Кавказа», Махачкала, 1965.

երևում է «Մ»-ն, չգիտես ինչու մեծատառ ձևով, ապա պարզ երևում է «Ղ» տառը և «Ծ» տառի մի մասը միայն:

Երկրորդ երեսի վրա եղած գրությունը մենք վերծանում ենք. «Մ Ղ Ծ Թ», Բոլոր տառերն էլ երևում են շատ հստակ:



Նկ. 15. Դադստանի բարի երկրորդ երեսի գրերը:

Դադստանի բարն անձամբ մենք չենք տեսել, վերծանությունը կատարում ենք լուսանկարի հիման վրա, որը կարող է և լուսանկարելու ժամանակ աղավաղված լինել, որովհետև բարի վրա, ինչպես երևում է, նախապես կավիճով զծել են նկատվող փորվածքները, հետո նկարել. անձանոթ գրության հետ գործ ունեցող լուսանկարիչը, բնական է, կարող էր և սխալ զծումներ կատարել:

Չնայած Դադստանում գտնված բարի վրա եղած տառանիշներն անվիճելի հայկական են, սակայն հայերեն չեն կարգացվում. ոչ մի իմաստ չեն տալիս, երբ նույնիսկ փորձում ենք ձայնավոր տառերի լրացումներ կատարել: Մնում է ենթադրել, որ այն զրված է Դադստանում ապրող ժողովուրդներից որևէ մեկի լեզվով: Այդ անհավանական չէ, եթե նկատի ունենանք, որ Դադստանում երբևիցե եղել է հայկական գաղթավայր, և անդացիները կարող էին ծանոթ լինել իրենց մոտ ապաստան գտած հայերի նշանագրերի հետ և օգտագործել այն իրենց լեզվով:

Եվ այսպես, մեր բերած աղվանական համարվող տասներկու դրատեսակներից ոչ մեկն աղվանական չէ և հնարավոր չէ նրանք օգտագործել Աղյուրեջանի ՍՍՀ բնագետների Մինդեհաուրում հայտնաբերած անվիճելի աղվանական գրություններն վերծանելու համար:

Կովկասագիտության մեջ խոսք է եղել նաև մի քանի այլ բնագրերի աղ-
վաներին լինելու մասին, որոնց հարազատությունը մերժվել է այլ ուսում-
նասիրողների կողմից, ուստի չենք ուղում նրանց վրա կանգ առնել: Խոսքը,
իհարկե, չի վերաբերում Մաշտոցի անվան մատենադարանի նշանավոր
№ 7117 ձեռագրի պարունակած այբուբենին, որի հարազատությունն ընդու-
նել են լոյսը աչքի բնկնող կովկասագետները՝ ակադ. Հ. Աճառյանը, ակադ-
Ա. Շանիձեն, պրոֆ. Ի. Արուստիանյանը և ուրիշներ: Այդ ձեռագրի աղվանական
այբուբենի հարցին մենք կանդրադառնանք մեր մի այլ հոդվածում:

О ТЕКСТАХ, СЧИТАВШИХСЯ АЛБАНСКИМИ

А. Г. АБРАМЯН

Доктор исторических наук

Р е з ю м е

Долголетние поиски востоковедов, пытавшихся найти письмо кав-
казских албаи, не увенчались успехом. Некоторыми учеными в руко-
писных коллекциях Матенадарана имени Маштоца и в других собра-
ниях были указаны тексты, которые считались албанскими. Автор дан-
ной статьи останавливается на этих текстах и на основании палеогра-
фического анализа доказывает, что они ничего общего не имеют с
подлинным албанским письмом.